ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի որոշմամբ, Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարվելու է եպիսկոպոսական ժողով հառաջիկա սեպտ. 25—հոկտ. 2-ը՝ քննարկելու համար այժմեությունն ներկայացնող մի շարք եկեղեցական հարցեր, համաձայն կազմված օրակարգի, որ հրապարակվելու է մոտ ապագային:

Սույն ժողովին մասնակցելու համար առանձին պաշտոնագրերով հրավիրված են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Երուսաղեմի հայոց պատրիարքը, Կ. Պոլսո հայոց պատրիարքը՝ իրենց Աթոռների եպիսկոպոսներով, և Հայաստանյայց եկեղեցվո բոլոր եպիսկոպոսները:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ

14 ապրիլ 1969 թ.,
Ս. Էջմիածին